

ՀՐԱՄԱՆԱԲ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

,

АВАГ АРУТЮНЯН

ГЕНОЦИД АРМЯН И АРМЯНСКИЙ ВОПРОС.

БИБЛИОГРАФИЯ КНИГ

(1860-2010)



AVAG HARUTYUNYAN

THE GENOCIDE OF ARMENIANS

AND ARMENIAN QUESTION.

THE BIBLIOGRAPHY OF BOOKS

(1860-2010)

ПЕРВОПРЕСТОЛЬНЫЙ СВЯТОЙ ЭЧМИАДЗИН

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

2014

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ.**

**ԳՐՔԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(1860-2010)**



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ - 2014

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

Հ 422

Տպագրվում է
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի
երաշխավորությամբ

Խմբագիր՝ Պետրոս Հովհաննիսյան

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԱԳ

Հ 422

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ. ԳՐՔԵՐԻ ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (1860-2010) Ա. Հարությունյան; Խմբագիր՝ Պետրոս Հովհաննիսյան.- Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014.- 560 էջ:

Ներկայացվում է Հայոց ցեղասպանությանը և Հայկական հարցին նվիրված 1860-2010 թթ. հրատարակված 19 լեզվով 17.325 միավոր գրքի ամփոփ և համապարփակ մատենագիտությունը: Գրքերի նկարագրությունը ներկայացված է բնագրի լեզվով և այբուբենով: Ի տարբերություն մինչ այժմ տպագրված մատենագիտությունների, որոնք ունեցել են ընդամենը անձնանունների-տեղանունների ցանկ, ըստ լեզուների կազմվել են հետևյալ օժանդակ ցանկերը՝ 1. անհեղինակ հրատարակությունների, 2. անձնանունների, 3. աշխարհագրական անունների, 4. հրատարակիչների, 5. տպագրութեան վայրերի, 6. տպագրության ժամանակագրության: Բոլոր ցանկերը կազմված են 6 լեզուների՝ հայերենի, ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի, թուրքերենի համար, յուրաքանչյուրն՝ առանձին-առանձին: Որպես հավելված՝ ներկայացված են 2011-2013 թթ. տպագրված թեմային առնչվող գրքերի ցանկեր:

Այս համահավաք մատենագիտությունն ուղեցույց և բանալի կլինի Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի թեմայի բազմակողմանի ուսումնասիրության համար, էապես նպաստելով հետազոտողների աշխատանքին: Այն հերթական անգամ հիմնավոր կերպով ապացուցում է Հայոց ցեղասպանությունը ժխտել՝ փորձող զեղծարարների «փաստարկների» սնանկությունը:

ԵՊՀ Գրադարան

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)




Տպագրվում է մեկենասությամբ
ՍԱՐԳԻՍ ԳԱՐԻԵԼՅԱՆԻ

236998

ISBN 978-9939-59-134-6

© Մայր Աթոռ Սր. Էջմիածին, 2014



ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՆԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻՆ



ԱՌԱՋԱԲԱՆ

Հայագիտության անսպառ օվկիանոսում թե ծավալի և թե հատկապես որակի առումներով առանձնանում է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված գրականությունը (սկզբնաղբյուրներ և պատմագիտական աշխատություններ): Այս թեման միշտ էլ գտնվել է ու կգտնվի հայ և օտար հասարակական-պատմագիտական մտքի ուշադրության կենտրոնում: Անհրաժեշտ է շեշտել, որ այս թեմայի վերաբերյալ գրականությունը քանակային առումով զգալիորեն գերակշռում է հայոց պատմության այլ թեմաներին:

Ավելին, հիմնախնդրի ուսումնասիրությունը պատմագիտականից զատ ունի նույնքան, անգամ ավելին, կարևոր հնչեղության քաղաքական նշանակություն՝ քարոզչական, բարոյա-հոգեբանական և միջպետական փոխհարաբերությունների տեսանկյունից: Այս պարագան հայ ժողովրդի համար ունի նաև միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության աներկբա փաստի համընդհանուր ճանաչմանը նպաստելուն միտված կարևորագույն դերակատարում:

* * *

Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը բազմաթիվ և ամենից տարբեր ձևակերպումներ են տրվել (մեծ մասամբ գրեթե միմյանց կրկնող): Նպատակ չունենալով ամենևին դրանք նորից կրկնել կամ անտեղի վիճարկել՝ ուղղակի նշենք, որ Հայկական հարց հասկացության ներքո նկատի ունենք հայ տեսակի իր պատմական հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում պետականության կերտման ու ամրապնդման իրավունքը՝ հենց տեսակի բարոյա-հոգեբանական արժեքային՝ համակարգի վրա հիմնված-խարսխված, իսկ Հայոց ցեղասպանություն հասկացության ներքո հասկանում ենք եղեռնագործ թուրքի նկատմամբ հայ տեսակի արդարացի վրեժխնդրություն և արդարահատույց:

Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել թե անցած պատմագիտական աշխատանքների գնահատման, և թե՛ ապագայի հետազոտական առաջնահերթությունների վերաբերյալ որոշ դիտարկումներ:

1. Առաջին հայացքից կարող է թվալ, որ պատմականորեն Հայկական հարցի միջազգային վարընթաց ուղղու և Հայոց ցեղասպանության պատճառների ուսումնասիրությունը պատշաճ կատարողականի է եզրահանգված: Ավաղ: Դա միայն արտաբուստ է և թվացյալ, խաբուսիկ, և՛ գրեթե զուրկ դաստիարակիչ ինքնաքննադատությունից: Ահավասիկ, պատմագիտությունը պետք է ի զորու լինի ժողովրդին հոգեբանորեն ներարկել այս առարկայական ճշմարտությունը:

2. Առանձնահատուկ ուշադրություն է անհրաժեշտ դարձնել 1862 թվականից սկսած ու հատկապես 1915 թվականի ինքնապաշտպանական հերոսամարտերի ուսումնասիրությանը, դրանց դաստիարակիչ նշանակության քարոզմանը, ինչն ի թիվս մի շարք հարցերի՝ հայոց հոգեբանությունը կծերբազատի կրավորական կոտորվողի անհարկի և վտանգահարույց բարդույթից:

3. Հայկական հարցի պատմության մեջ առանձնակի տեղ ունի հայության քաղաքական ճակատագրի հետ ուղղակի կամ անուղղակի կապված միջազգային պայմանագրերի (սկսած Սան-Ստեֆանոյից մինչև Սևր ու Կարս ...) պատմա-իրավական կողմերի ուսումնա-

սիրությունը: Դրանք թե իրենց ժամանակ և թե հետագա շրջանում խռովել են ազգային-հասարակական անդորրը՝ շատ հաճախ նաև սին խոստումներով կերակրելով կամ ոգեթափ անելով, զրկելով պայքարի վճռակամությունից: Այդ պայմանագրերին մենք անվերապահորեն անհամեմատ ավելի շատ հավատ ենք ընծայել, քան հայ ժողովրդի անսպառ ոգեղեն ներուժին ու տարածաշրջանում օրեցօր հարափոփոխ իրականացվող զարգացումներին: Ըստ այդմ, հարկավոր է հետազոտել պայմանագրերին ծնունդ տվող աշխարհաքաղաքական մեխանիզմները, դրանց կենսունակության աստիճանը, գոյատևման հեռանկարների հավանականությունը: Ընդ որում, ոչ միայն պատմագիտական, այլև ռազմա-քաղաքական, իրավական, տնտեսական, ազգագրական առումներով:

4. Հայկական Հարցի պատմության մեջ արտաքին կողմնորոշումների հարցը պատմագիտական տեսանկյունից միշտ էլ վիճահարույց խնդիր է: Մինչ այժմ, հայ քաղաքական միտքը զբաղվել է դրա փնտրտուքով, տարբերակումներով և փորձել անընդհատ նժարին դնել այս կամ այն օտար պետությանը նախապատվություն տալու հարցը: Այս պարագան, ինչ խոսք, ունի պատմական որոշակի հիմք, որն էլ տարափեղկել է հայ քաղաքական միտքը: Հենց հովանավորների փնտրտուքն էլ մեզ զրկեց ժամանակին՝ օրինակ Սևրի պայմանագրի իրականացմանը պատրաստ լինելու մտակարողությունից: Ժամանակին մենք հիմնավորապես չգիտակցեցինք Խրիմյան Հայրիկի՝ Բռնիկի կոնգրեսի փորձից իմաստացած «Երկաթե շերտի» խորհուրդը, որի համար անասելիորեն թանկ հատուցեցինք: Դիվանագիտական վավերագրերի արժեք ունեցող փաստաթղթերի ժամանակը վաղուց անցել է:

5. Հասկանալիորեն, հայ քաղաքական մտքի ընդհանրապես և ազգային-ազատագրական պայքարի մասնավորապես ավելի քան հարյուրամյա պատմության ընթացքում վճռորոշ դերակատարություն են ունեցել հայկական կուսակցություններն ու կազմակերպությունները: Այս առումով, հարկավոր է նախկինում կատարված աշխատանքի գնահատմամբ հանդերձ՝ դրանց պատմության և հատկապես գաղափարախոսությունների ուսումնասիրությունն իրականացնել համալիր և փոխկապակցված ձևով, զերծ մտալով որևէ կողմնապահությունից և ինչ-ինչ ենթակայական գործոնների տուրք տալուց, և այդ ամենը դիտարկել գերազանցապես թեմայի հավաքական շրջանակներում: Այսինքն, առանձին հետազոտության առարկա պետք է դարձնել Հայկական հարցի ճակատագրի հարցում և Հայոց ցեղասպանության ընթացքում հայ հասարակական տարբեր խավերի գաղափարախոսության և գործունեության դիրքորոշման ու բնութագրման ուսումնասիրումը:

6. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությունը մինչ այժմ գերազանցապես մնացել է որպես «պատմագիտական առարկա», որպես՝ ընդհանրապես հայ ժողովրդի բազմահազարամյա պատմության փուլերից մեկը: Անշուշտ, որոշակի և հստակ ձևով իր ազդեցությունն է թողել թեմայի ազգային-քաղաքական հնչեղությունը և միջազգային նշանակությունը, բայց թեման երբեք համապարփակ ձևով չի վերլուծվել ոգեղեն-գաղափարախոսական տեսանկյունից, այն չի դիտարկվել հայ ազգային արժեհամակարգի շրջանակներում:

7. Թեմայի ուսումնասիրողների համար պետք է անբեկանելի և վերջնական ճշմարտություն ընդունվի այն փաստը, որ եղեռնագործ թուրքի համար Արևմտյան Հայաստանը հոգևոր Հայրենիք չէ և չի կարող երբեք այդպիսին դառնալ: Այս կարևորագույն հանգամանքը ազգային-հոգեբանական գործոնների համատեքստից գատ անհրաժեշտ է դիտարկել նաև հենց պահանջատիրության ուղղությամբ տարվող աշխատանքների առումով:

8. Թեման հայրենասիրական դաստիարակության համապատկերում անբավարար չափով է ուսումնասիրված և ներկայացված թե գեղարվեստական և թե հատկապես՝ պատմագիտական գրականության մեջ:

9. Բացակայում է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ոլորտում հայոց ունեցած բացթողումների և թերացումների առարկայական քննադատությունը, դրանց հոգևոր-քաղաքագիտական վերլուծությունը: Մինչդեռ, նման բան կատարողները կամ փորձողները ենթարկվել են խիստ քննադատության, ինչը որոշ առումով խանգարել է հայ պատմագիտա-

կան-քաղաքական մտքի ազատ, ստեղծագործական զարգացմանը և հասարակական կարծիքի ու մտածողության առարկայական վերաթեքավորմանը: Մանավանդ, եթե անցյալի ինքնաքննադատական մոտեցումը միտված և նպատակաուղղված է հայ հասարակության շրջանում կրավորական պարտվողականության հոգեբանական բարդույթի արմատախիլ անելուն:

10. Թեպետ Արցախյան հերոսամարտի վերաբերյալ հրապարակի վրա են հարյուրավոր գրական-պատմագիտական աշխատանքներ, սակայն դրանք գերազանցապես մնացել են ստվերում, դարձել հիմնականում «տպագիր թուղթ»: Դեռևս չի արարվել այն էպիկական ասք-գործը, որ պետք է ժողովրդին ոգի ու շունչ հաղորդի՝ անմահացնի իր նորոթյա հերոսներին: Արվեստի ոլորտում բացակայում է փոքր կամ մեծ ծավալի այն ստեղծագործությունը, որ պետք է օրինակ՝ երաժշտության, կինոյի, կերպարվեստի տեսակով հավերժացնի ժամանակակցի հերոսականը՝ ինչպես ներկա, այնպես էլ՝ հատկապես ապագա սերունդի համար: Իսկ պատմագիտության բնագավառում առաջնահերթ շեշտադրումները պետք է կատարվեն հենց հայրենասիրական-հայրենապաշտական երանգի վրա՝ գերծ մտալով այսպես կոչված «չոր գիտականությունից»: Այսուհետ, միակ չափանիշը ցանկացած պատմագիտական աշխատանքի հարցում պետք է լինի դրա հայրենասիրական նշանակությունն ու քաղաքական արդի դերակատարությունը:

11. 1988թ. հետո տեղի ունեցան հիրավի համազգային նշանակության իրադարձությունները (Արցախյան ազատամարտ - հազարամյա հոգեբանական նիրհից ու նահանջից հետո հայոց հողի՝ ԼՂՀ և հարակից շրջանների ազատագրում, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակում և դրա ամրապնդման գործընթաց, 21-րդ դարաշեմին ցեղասպանության կրկնում (Սուճալիթ, Բաբու), Հայրենիք-Սփյուռք կապերի համակարգային ամրապնդում) առարկայորեն խաթարեցին հայոց շրջանում արհեստականորեն ձևավորված շատ կաղապարներ՝ նոր եղելությունների առջև դեմ հանդիման կանգնեցնելով և հոգեբանական լայնատարած ցնցման ենթարկելով շատ կողմերով հանպատրաստ հայությանը: Հարկավոր է համակարգային ուսումնասիրության ենթարկել վերջին 25 տարվա ողբերգահերոսական իրադարձություններով լեցուն ժամանակահատվածը: Այսինքն, հայ պատմագիտությունը պետք է ուսումնասիրի և ներկայացնի հատկապես զինված պայքարի շնորհիվ հայության նվաճած հաղթանակների պատմությունը:

12. Այսօր հայության առջև դրված խնդիրները պահանջում են համապարփակ և հավասարակշռված մոտեցումներ ու լուծումներ: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ռազմավարություն, որպեսզի ի գործու լինենք պատրաստվել և կարողունակ լինել աշխարհաքաղաքական ցանկացած իրադրության: Հակառակ դեպքում նորից կկանգնենք կտորած տաշտակի առջև, իսկ երկրորդ, 1915 թվական մեր՝ հիմնականում թշնամաբար տրամադրված շրջապատում, դժվար բացառելի է: Պետք է միշտ հիշել, որ եղեռնագործ Թուրիքան շարունակում է մտալ մեր գլխավոր իրական հակառակորդը՝ հենց Հայոց ցեղասպանության ճանաչման և Հայկական հարցի լուծման ճանապարհին:

* * *

Որպեսզի Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը և իրավական ճանաչման քարոզչությունն ամենևին չկրի պատեհային, անհատական, անկազմակերպ և «հորեյանական» բնույթ, անհրաժեշտ է հիմնական շեշտադրումները կատարել հետևյալ ուղղություններով.

1. Հայոց ցեղասպանության ուսումնասիրության և իրավական ճանաչման քարոզչության աշխատանքները համակարգելու և ղեկավարելու նպատակով միանգամայն հրատապ անհրաժեշտություն է մշտապես գործող համապատասխան խորհրդակցական պետական-պատմագիտական մարմնի ստեղծումը, ինչը հնարավորություն կտա ու էապես կնպաստի պատմագիտական, հրատարակչական ու քարոզչական աշխատանքների պետական բարձր մակարդակով հովանավորմանը և նպատակասլաց, ծրագրավորված ուղղորդմանը:

2. Հայոց ցեղասպանությունը համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ պետական ահաբեկչության քաղաքականության առաջին և անսահման ցայտուն ու դասական օրինակ է, իրականացված իշխող ազգի պետական մեքենայի կողմից հպատակ ազգերից մեկի՝ հայերի համակարգված և նպատակաուղղված ոչնչացմանը միտված: Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականությունն իր հետապնդած տարածաշրջանային աշխարհաքաղաքական հեռահար նպատակներով իրավամբ պետք է գնահատել նաև որպես միջազգային ահաբեկչություն, քանզի այն կատարելապես խարխլեց Մերձավոր Արևելքի ազգագրական, մշակութային և կրոնական հավասարակշռությունը: Թուրքական պետության կողմից իրականացված այդ միջազգային ահաբեկչության ակնհայտ բացասական ազդեցությունը և հետևանքները ցայսօր էապես նկատելի են և տարածաշրջանային քաղաքական ներկա զարգացումներում ոչ կառուցողական ընթացքի կարևորագույն նախապայմաններից են: Այս առումով, միջազգային ահաբեկչության դեմ մղվող համընդհանուր պայքարի համալիրում ՀՀ արտաքին քաղաքականության շրջանակներում (նաև միջազգայնագետ-քաղաքագետների ու պատմաբանների կողմից) պետք է ներկայացնել ու քննադատել թուրքերի իրականացրած ցեղասպանության քաղաքականությունը՝ որպես միջազգային ահաբեկչության առաջին և ցարդ համաշխարհային հանրության կողմից անպատիժ մնացած հանրահայտ օրինակ:

3. Հայոց ցեղասպանության փաստն ուղղակիորեն ապացուցում է Օսմանյան կայսրությունում ժողովրդավարության ինստիտուտների և մարդու իրավունքների պաշտպանության իսպառ բացակայությունը, իսկ ներկայիս Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի պետական մակարդակով համառ ժխտումն ակնհայտորեն կրկին վկայում է համամարդկային քաղաքակրթական արժեհամակարգին Թուրքիայի անհամապատասխանությունը: Այսինքն, թեման պետք է ուսումնասիրվի-ներկայացվի նաև այդ հարթությունում:

4. Հնարավորինս պետք է ուղղորդել և օժանդակել (սփյուռքահայ կառույցների ակտիվ մասնակցությամբ և աջակցությամբ) օտար պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության իրավական ճանաչման գործընթացը, այն զերծ պահելով պատեհային և անկազմակերպ ճանապարհից:

5. Հայոց ցեղասպանությունը բացառապես համաթուրանական գաղափարախոսությամբ առաջնորդվող պետական քաղաքականության արդյունք էր, որտեղ կրոնական գործոնը զուտ շղարշի դեր էր խաղում և օգտագործվում: Ցեղասպանությունն անվերապահորեն թուրքական պետության ռասիստական ազգայնամուլական քաղաքականության արդյունք էր՝ նպատակաուղղված կոնկրետ մեկ ազգի՝ հայերի ֆիզիկական ոչնչացմանը: Վերոշարադյալի համապատկերում, մինչ այժմ՝ եզակի բացառություններից զատ (այն էլ գերազանցապես միայն հայերեն լեզվով), անհրաժեշտ ուսումնասիրության չի ենթարկվել համաթուրանականության քաղաքականությունը և գաղափարախոսությունը, պատշաճ և հիմնավոր կերպով չի քննադատվել ու մերկացվել դրա ընդգծված ազգայնամուլական-ռասիստական ուղղվածությունը: Այս առումով, անհրաժեշտ է ներկայացնել և քննադատել համաթուրանականության մարդատյաց ուսմունքը, հիմնավորապես ապացուցելով դրա վտանգահարույց լինելը համաշխարհային ու տարածաշրջանային աշխարհաքաղաքական կայունության տեսանկյունից: Պետք է հայերեն (ներդաստիարակչական նպատակով) և առավելապես օտար լեզուներով (միջազգային ատյաններում Հայոց ցեղասպանության իրավական ճանաչման հետապնդման նպատակով) ընտրովի հրատարակել հայտնի համաթուրանական տեսաբանների և գործիչների աշխատությունները՝ քնականաբար շեշտադրումները կատարելով հիմնականում ոչ թե գիտական ուսումնասիրության, այլ գերազանցապես դրանց հակամարդկային գաղափարների քննադատմանը միտված հայանապատ քարոզչության ուղղությամբ:

6. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ հատկապես Մերձավոր-Արևելյան տարածաշրջանում անընդհատ առկա է աշխարհաքաղաքական զարգացումների միտում (մասնավորապես վերջինս դեռևս շատ հեռու է կայուն դառնալու հնարավորությունից, քանզի Հայոց ցեղասպանության իրավական համընդհանուր

ճանաչում և հայ-թուրքական հողային հակամարտության թեկուզ մասնակի կարգավորում տեղի չի ունեցել, անհրաժեշտ է համապատասխան աշխատանքներ ծավալել արաբական երկրներում՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչել տալու ուղղությամբ: Հայոց ցեղասպանության ուսումնասիրության և իրավական ճանաչման քարոզչության տեսանկյունից միանգամայն տեղին է արժեքավոր աշխատությունների և փաստաթղթերի ժողովածուների արաբերեն լեզվով հրատարակությունը, ինչպես նաև հայամետ արաբ հեղինակների աշխատությունների հայերեն ու օտար լեզուներով հրատարակությունը:

Ինչպես արդեն նշեցինք, Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի պատմությունը մշտապես հայ և օտար պատմագիտության ուշադրության կենտրոնում է եղել: Ըստ այդմ, 1860 թվականից սկսած գրվել են հազարավոր աշխատություններ, հրատարակվել հուշագրություններ: Բնականաբար, ժամանակի ընթացքում այդ հսկայածավալ գրականությունն իմի բերելու, մատենագիտական ցանկերում և գրքերում հավաքելու պահանջ առաջացավ: Հիրավի այս անասելիորեն դժվարին և բարդ աշխատանքի սկզբնավորողը դոկտոր Արմենակ Սալմասյանն էր¹:

«Ներածության» մեջ Ա. Սալմասյանը մասնավորապես նշում էր. «... Նախորդը ամբողջովին վերանայեցի, մանրակրկիտ կերպով ուղղեցի, օժտեցի մանրամասնություններով և զգալապես ավելացրի: Այս դժվարին և ընդարձակ աշխատությունը քսանհինգ տարվա ընթացքում համոզեց ինձ, թե ինչպիսի հետաքրքրություն են հարուցում ընդհանրապես նման աշխատությունները Արևմուտքի ընթերցողների մեջ: Օտար լեզուներով՝ Հայաստանին և հայերին վերաբերող այսպիսի մի բարդ մատենագիտության նյութերի հավաքումը, դասավորումը, նմանապես և ճշգրտումը պահանջում են վիթխարի ջանք ու պրպտում: Մատենագետների մեծ մասին մտահոգել է մեթոդի հարցը՝ նախընտրել այբբենական, ժամանակագրային, թե՛ նյութերի դասակարգման եղանակը: Ամեն ինչ լավ կշռադատելուց հետո ինձ ավելի գերադասելի թվաց այբբենական կարգը՝ որպես տվյալ մատենագիտության համար ամենահարմարը: Ես չեմ թաքցնում իմ աշխատության հնարավոր անկատարությունները, ինչպես նաև հավանական վրիպումները: Դեռ չի եղել մի մատենագիտություն, որ ամբողջովին զերծ չլինի սխալներից և թե պակասներից: Ուստի և ես նախօրոք հույսս դնում եմ այն անձանց ներդրման վրա, որոնք ի վիճակի կլինեն դատելու այդ մասին»²:

Ի դեպ, որպես նորույթ հավելեմ, որ դեռևս 1963թ. ՀԿԿ ԿԿ-ը դիմել է ԽՄԿԿ ԿԿ-ին, որպեսզի թույլատրեն հրավիրել Եվրոպայի խոշորագույն մատենագետ հայագետներից մեկին՝ Արմենակ Սալմասյանին, ում գալը համարվում էր հայագիտության և մատենագիտական աշխատանքների զարգացման ուղղությամբ դրական դեր կատարող³:

Ինչ խոսք, Ա. Սալմասյանի աշխատանքն ուներ ընդհանուր հայագիտական բնույթ և ընդամենը մեկ բաժին էր նվիրված թեմային, ուր ամփոփված էին եվրոպական լեզուներով 177 միավոր գիրք: Այսուհանդերձ, նրա մատենագիտությունն էական դեր կատարեց թե բուն թեմայի, և թե՛ հայագիտության-արևելագիտության զարգացման ուղղությամբ⁴:

Որպես հաջորդ քայլ՝ թեպետ և հավելվածային տեսքով, հիշատակենք Հայոց ցեղասպանության վերաբերյալ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի խմբագրած փաստաթղթերի և նյութերի արժեքավոր ժողովածուն⁵: Այդտեղ ամփոփված են բազմալեզու 184 միավոր գրքեր: Ի

¹ St'u Salmaslian Armenag. Bibliographie de l'Arménie. Paris, 1946. Nouvelle édition entièrement revue et considérablement augmentée. L'Academie des Sciences de la R. S. S. de l'Arménie, Bibliothèque Fondamentale. Erevan: Éditions de l'Academie des Sciences de la R. S. S. de l'Arménie, 1969, 471 pp.

² St'u Salmaslian Armenag. Bibliographie de l'Arménie. Erevan, 1969, pp. 12-14.

³ ՀԱԱ, ֆ. 1, ց. 43, գ. 46, թ. 195:

⁴ St'u Հակոբ Անասյանի գրախոսականը - ՊԲՀ, 1971, թ. 1, էջ 239-254:

⁵ Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов. Под редакцией М. Г. Нерсисяна. Составители: М. Г. Нерсисян и Р. Г. Саакян. АН Арм. ССР.- Ер.: "АН Арм. ССР", 1966, XVI+563 с. 2-е

դեպ, Մ. Ներսիսյանի ցանկը ներառվել է նաև հետագա մի շարք հրատարակություններում¹:

1970-ական թվերին Բեյրութում հիմնվեց Հայկական Լրատվական կենտրոն, ուր կազմվեց մատենագիտական ցանկ 390 էջ մեքենագիր ծավալով, սակայն չտպագրվեց²:

1973թ. Բեյրութում կազմվել է խմբագրական մարմին Հայկական ցեղասպանության 60-ամյակի նշման համար: Հրավիրվեցին Շավարշ Թորիկյանը, Վահե Օշականը, Արտաշես Տեր-Խաչատրյանը, Լևոն Վարդանը, Հրանդ Գանգրունին, Չավեն Մարյանը, Հակոբ Թերճյումանյանը: Նյութերի մեկտեղումը և դասավորման աշխատանքը վստահվեց Լևոն Վարդանին և Հակոբ Թերճյումանյան: 43 էջ ծավալով կազմված մատենագիտությունը 3 հազար օրինակով թեպետ տպվեց, բայց տպագրական և այլ սխալներ այնքան շատ էին, որ տպաքանակը ոչնչացվեց: Բուն ցանկը հավաքել և խմբագրել էին Հակոբ Թերճյումանյանը, Լևոն Վարդանը և Ռիչարդ Հովհաննիսյանը: Այս ցանկն ուներ հետևյալ կառուցվածքը՝ անգլերեն - 93 միավոր, ֆրանսերեն - 77, գերմաներեն - 31, իսպաներեն - 2, ռումիներեն - 4, լեհերեն - 1, իտալերեն - 8, դանիերեն - 4, հոլանդերեն - 1, հունգարերեն - 1, ռուսերեն - 5, թուրքերեն - 6, արաբերեն - 6, պարսկերեն - 1, հունարեն - 4, հայերեն - 235:

1975թ. հրատարակված Մուսա Պրենսի գրքի հավելվածում ամփոփված էր 629 միավոր գիրք³:

Ռիչարդ Հովհաննիսյանի կազմած մատենագիտության մեջ⁴ ամփոփված էին 460 միավոր գիրք և հոդված, որից՝ անգլերեն - 203, ֆրանսերեն - 169, գերմաներեն - 46, թուրքերեն - 11, իտալերեն - 8, ռուսերեն - 7, դանիերեն - 5, շվեդերեն - 3, արաբերեն և ռումիներեն - 2-ական, և 1-ական՝ իսպաներեն, նորվեգերեն, հոլանդերեն և հունգարերեն:

Հետագայում ակտիվացավ բազմալեզու մատենագիտությունների պատրաստման աշխատանքը: Առաջինը հիշատակենք Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի հրատարակությունը⁵: Այդտեղ ընդգրկված էին միայն գրադարանի արտասահմանյան լեզուներով գրականության բաժնում եղած 1915-1989թթ. կարևոր համարված հրատարակությունները՝ 79 միավոր:

Առավել ամբողջական էր Մ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված մատենագիտությունը⁶: Այստեղ միայն 1915-1995թթ. տպագրված գրքերն են ընդգրկված՝ երկու բաժանումով՝ 1915-1964 և 1965-1995 թվականներ, հայերեն - 545, ռուսերեն - 149, անգլերեն - 205 միավոր: Նույն գրքի տարբեր հրատարակությունները և տարբեր հատորները ներկայացված-նշված են տարբեր թվանիշերի տակ:

Հաջորդը ՀՀ ԳԱԱ, Հասարակական գիտությունների ինֆորմացիոն կենտրոնի հրատարակությունն էր⁷: Այստեղ առկա են նույն գրքերի որոշ կրկնություններ, գրքերն ներկա-

издание.- Ер.: "Айастан", 1982, XVI+685 с. 2-е дополненное издание.- Ер.: "Айастан", 1983, XVI+685 с.

¹ Տե՛ս օրինակ **Lepsius Johannes**. Le rapport secret du Dr. Johannes Lepsius, President de la Deutsche Orient mission et de la Societe Germano-Armenienne, sur les Massacres d'Armenie. Beyrout, 1968, pp. 351-358. **Mandelstam Andre N.** La Societe des Nations et les Puissances devant le Probleme Armenien. Beirut, 1970, pp. 505-514. **Barby Henri.** Au pays de l'epouvante. L'Armenie Martyre. Beyrouth, 1973, pp. III-XIII. An Anthology of Historical Writings on the Armenian Massacres of 1915. Beirut, 1975, pp. 219-229.

² Տե՛ս 1915-1922: Archival Sources and Bibliography of Books on the Turkish Genocide of Armenians. Beirut, 1975.

³ Տե՛ս **Prince Moussa**. Un Genocide Impuni: L'Armenocide. Beyrouth, 1975, 582 pp.

⁴ Տե՛ս **Hovannisian Richard G.** The Armenian Holocaust: A Bibliography Relating to the Deportations, Massacres and Dispersion of the Armenian People, 1915-1923. Cambridge, 1980, 43 pp.

⁵ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը (Մեծ Եղեռնի 75-ամյակի առթիվ): Գրականության մատենագիտական ցանկ. օտար գրականություն: Կազմող՝ Ֆ. Ա. Պարոնյան: Խմբագիր՝ Մ. Հ. Բաբայան: Հրատ. «Ալ. Մյասնիկյանի անվան Պետական գրադարան»: Ե., 1990, 22 էջ:

⁶ Տե՛ս Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանությունը: Մատենագիտություն: Կազմողներ՝ Ռ. Բաբաջանյան, Ն. Դերոյան, Մ. Կարապետյան, Մ. Հովհաննիսյան: Խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան: Ե., «Առեքտում-Անի», 1995, 111 էջ:

⁷ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ (1894-1923). Մատենագիտություն: Կազմողներ՝ Ա. Հ. Հարությունյան, Գ. Բ. Մկրտչյան: Հրատ. «ՀՀ ԳԱԱ, Հասարակական գիտությունների ինֆորմացիոն կենտրոն»: Ե., «ՀՀ ԳԱԱ», 1993, 122 էջ:

յացված են ընդհանուր համարակալմամբ, հայերեն - 555, ռուսերեն - 142, անգլերեն - 306, ֆրանսերեն - 105, գերմաներեն - 41, իտալերեն - 3 միավոր ծավալով:

Առանձնահատուկ պետք է նշել Տիգրան Անուրգյանի և Հակոբ Անասյանի համատեղ մատենագիտությունը¹: Այստեղ գրքերին զուգահեռ կան նաև հոդվածներ՝ ընդհանուր համարակալմամբ, նույն հեղինակի նույն գրքի տարբեր հրատարակություններ հատորներով ներկայացված են տարբեր համարների տակ: Ունի հետևյալ պատկերը՝ հայերեն - 700, անգլերեն - 461, ֆրանսերեն - 353, թուրքերեն - 59, գերմաներեն - 53, իտալերեն - 22, իսպաներեն - 6, դանիերեն - 3, ռումիներեն - 1, չեխերեն - 1, հունգարերեն - 1: Հ. Անասյանի կազմած ռուսերեն ցանկը բաղկացած էր 662 միավորից, որից 238-ը գիրք էր:

Հետագա մատենագիտական աշխատանքներից հիշատակության արժանի են Ս. Պողոսյանի և Կ. Պողոսյանի կազմած², և հատկապես՝ Հայաստանի Ազգային գրադարանի հրատարակած³ մատենագիտությունները: Չնայած առկա մի շարք թերություններին, այնուամենայնիվ դրանք՝ մանավանդ երկրորդը, թեմայի ընդհանրացման տեսանկյունից որոշակի դերակատարություն ունեցան:

Բազմալեզու մատենագիտություններից զատ հրատարակության պատրաստվեցին նաև միայն ռուսերենով գրականության ցանկեր⁴: Այս ասպարեզում առանձնակի հիշատակության և գնահատման արժանի են Հակոբ Անասյանի և Արման Կիրակոսյանի կազմած մատենագիտությունները: Ռուսերեն լեզվով մինչ այժմ եղած ամենից կատարյալը Պետրոս Յովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակված մատենագիտությունն է, որտեղ ամփոփված է 523 միավոր գիրք⁵:

Թեմայի ընդհանրական պատկերացման տեսանկյունից որոշակի տեղեկատվական դեր են կատարել նաև քրդագիտության⁶, Թուրքիայի⁷ և Իրանի⁸ պատմության վերաբերյալ ռուսերեն մատենագիտությունները:

¹ Տե՛ս **Վերոզեան Տիգրան, Անասեան Յակոբ**, Հայկական հարցը եւ հայկական կոտորածները. Համապարփակ մատենագիտութեան փորձ: Հրատ. «Հ. Բ. Ը. Միութեան Ալէք Մանուկեան Մշակութային հիմնադրամ»: Գահիրէ, Նուպար, 1995, 300 էջ:

² Տե՛ս **Պողոսյան Ս. Կ., Պողոսյան Կ. Ս.**, Հայկական Հարցի և Հայոց Տեղասպանության մատենագիտություն: Ե., «Նաիրի», 2000, 434 էջ:

³ Տե՛ս Հայկական հարց: Հայոց ցեղասպանություն: Մատենագիտություն: Գիրք 1-2: Կազմողներ՝ Ե. Չեքելեզյան, Լ. Խաչատրյան, Ա. Դավթյան, Է. Բարայան: Խմբագիրներ՝ Դ. Սարգսյան, Հ. Ղազարյան: Հրատ. «Հայաստանի Ազգային գրադարան»: Ե., 2005, 348+552 էջ:

⁴ Տե՛ս մանրամասն **Армянский вопрос и геноцид армян в Турции. Краткая библиография литературы на русском языке. Составитель: А. С. Анасян.- Лос-Анджелес, 1983, 177 с. Библиография литературы по армянскому вопросу (1890-1900). Составитель: А. Дж. Киракосян. АН Арм. ССР. Центр научной информации по общественным наукам.- Ер., 1983, 31 с. Армянский вопрос: 1878-1983. Библиография литературы на русском языке. Составитель: А. Дж. Киракосян. АН Арм. ССР. Центр научной информации по общественным наукам.- Ер., 1985, 64 с. Арцах-Карабах: Библиография. Ч. 1 (1988-1989). Составители: Р. Чилингарян, С. Билбулян.- Ер.: "Ереванский государственный университет", 1993, 191 с. Армянский вопрос и Геноцид армян. Библиография литературы на русском языке (1998-2007). Составитель: Э. Бабалян.- Ер.: "Ереванский государственный университет", 2009, 282 с. Арцах-Карабах. Библиография на русском языке 1988-2010гг. Составители: А. Г. Симонян, А. А. Гарибян, Э. А. Бабалян. Институт Арменоведческих исследований ЕГУ.- Ер., 2011, 360 с.**

⁵ Տե՛ս **Армянский вопрос. Геноцид армян. Библиография литературы на русском языке (1877-1997).** Составители: П. О. Оганесян, Э. А. Бабалян. Ответственный редактор и предисловие: П. О. Оганесян. Центр изучения Национального вопроса и Геноцида.- Ер.: "Хоск", 1998, 316 с.

⁶ Տե՛ս **Библиография по курдоведению.** Составитель: Ж. С. Мусаелян. Ответственный редактор: К. К. Курдоев. АН СССР, Институт народов Азии.- М.: "Восточная литература", 1963, 184 с.

⁷ Տե՛ս **Библиография Турции (1917-1958).** Составитель: А. К. Сверчевская.- М.: Восточная литература, 195-9. **Библиография Турции (1713-1917).** Составители: А. К. Сверчевская и Т. П. Черман. Ответственный редактор: Б. М. Данциг.- М.: "Восточная литература", 1961, 267 с. **Библиография Турции - Литература на русском языке (1917-1975).** Составители: А. К. Сверчевская и Т. П. Черман. Ответственный редактор: А. М. Шамсутдинов.- М.: "Наука", 1982, 742 с.

⁸ Տե՛ս **Библиография Ирана. Литература на русском языке (1917-1965).** Составитель: А. К. Сверчевская.-

Անգլերեն լեզվով մատենագիտություններից հիշատակենք Ռուբեն Ադալյանի¹ և Համո Վասիլյանի² աշխատանքները: Վերջինս ամփոփում էր 380 միավոր գիրք, և ուներ հետևյալ ուշագրավ նորույթը՝ նշված էին այդ գրքերի գրադարաններում տեղաբաշխվածությունը և պահպանվող քանակները:

Թեպետ բավականին ուշացումով՝ դերակատարումս ուներ նաև լեզվական խնդիրը, կազմվել են նաև թուրքերեն լեզվով մատենագիտություններ: Այս հարցում անուրանալի դերակատարություն ունի անվանի հայագետ Լևոն Վարդանը, ով անփոփել է տարբեր լեզուներով՝ գերազանցապես թուրքերեն, թուրք հեղինակների հրատարակությունները³:

Առաջաբանում հեղինակը հատկապես շեշտում էր, որ. «... այս հատորը կու գայ գրելու եւ ամբողջացնելու մինչեւ այսօր թողլբուած եւ մոռացումի մատնուած մէկ էջը Հայկական Տասնհինգի ուսումնասիրութեան, եւ անոր հետ նաեւ՝ Հայկական Հարցին: Իրաւ է, որ ամբողջական չէ անիկա, եւ չի կրնար ըլլալ ալ, ահա թէ ինչու համար այս հատորն իր թիկունքին չի կրեր քղամիղն սպառնիչ ամբողջականութեան մը: Ուեւ մէկէն առաջ եւ անելի՛ այս գործին հեղինակն ինք գիտէ թերիներն իր կատարած աշխատանքին, որովհետեւ այն ինչ որ պիտի ըլլար արդիները հաւաքական աշխատանքի եւ առ այդ՝ ամբողջացումի՝ կատարեց ինք առանձին, եւ այդ իսկ պատճառով՝ հաւաքական աշխատանքի եւ ճիգի ընծեռելիք ամբողջականութեան մը բարիքը մերժուեցաւ իրեն»⁴:

Մատենագիտության արժեքն առավել կարևորվում է նաև անցյալ մատենագիտական աշխատանքների վերլուծությամբ և գնահատմամբ: Գիրքն ունի հետևյալ պատկերը՝ թուրքերեն – 390, անգլերեն – 74, ֆրանսերեն – 58, գերմաներեն – 12, հայերեն – 3, այլ լեզուներով – 11 միավոր: Անշուշտ, այս գիրքն արժանի է նաև թուրքերենով հրատարակման:

Թուրք հեղինակներից հիշատակենք Թուրքայա Աթայովի⁵ և Ճանտան Պատեմի⁶ գրքերը: Վերջինս ընդգրկում էր թուրքերեն, հայերեն, ռուսերեն, արևմտաեվրոպական լեզուներով 4450 միավոր գիրք և հողված, բոլորը՝ լատինատառ, իսկ հայերեն և ռուսերեն հրատարակությունները՝ նաև թուրքերեն թարգմանությամբ:

Թեպետ մեր ներկա մատենագիտության մեջ արաբերեն լեզվով գրականությունն ընդգրկված չէ, սակայն փաստենք, որ վերջին տարիներին այդ ուղղությամբ բավականին աշխատանք է կատարվել⁷:

Մ.: “Наука, Главная редакция восточной литературы”, 1967, 391 с.

¹ St'u Adallian, Rouben Paul. Armenian Genocide Resource Guide. Washington, D. C.: Armenian Assembly of America, 1988, 56 pp.

² St'u The Armenian Genocide. A Comprehensive Bibliography and Library Resource Guide. Edited by Hamo B. Vassilian. Glendale, CA: Armenian Reference Books Company, 1992, 103 pp. Իսկ վերջին աշխատանքներից օրինակ տե՛ս Fowler, Rena. The Armenian Genocide: A Comprehensive Bibliography and Library Resources Guide, Library Journal, Vol. 118, N. 1, 1993. Felix Leo. Genocide: A Bibliography, Ararat: A Quarterly, Vol. XXXIII, N. 131, Summer 1992. Shirinian G. N. The Armenian Massacres of 1894-1897. A Bibliography. Armenian Review, Spring/Summer 2001, Vol. 47, N. 1-2, pp. 113-164.

³ St'u Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը թուրքական մատենագիտութեան մեջ, «Հայկագեան հայագիտական հանդես», Պէյրուս, հտ. ԺԵ, 1995, էջ 301-374: Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը թուրքական մատենագիտութեան եւ մամուլին մեջ եւ մենք: Պէյրուս, 1998, 257 էջ:

⁴ Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը թուրքական մատենագիտութեան եւ մամուլին մեջ եւ մենք, էջ 5:

⁵ Ataöv, T. Ermeni Sorunu. Bibliyografya. Ankara Üniversitesi Siyasal Bilgiler Fakültesi. Ankara, 1981, XI+32 s.

⁶ Badem, Candan. Türk-Ermeni sorunu bibliyografyası. Istanbul: Aras Yayıncılık, 2007, 427 s.

⁷ Թովալեան Արշալոյս, Համիտեան «Չուլումի» քաղաքականութեան արտացոլումը արաբական արդի պատմագրութեան մեջ, «Հայկագեան հայագիտական հանդես», հտ. ԺԵ, 1995, էջ 135-148: Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանության պատճառների լուսաբանությունը և գնահատականը արաբական ժամանակակից պատմագրության մեջ: Հրատ. «ՀՀ ԳԱԱ, Արևելագիտության ինստիտուտ»: Ե., «Չանգակ-97», 1996, 16 էջ: Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո: Հրատ. «ՀՀ ԳԱԱ, Արևելագիտության ինստիտուտ»: Ե., «Չանգակ-97», 2004, 208 էջ:

* * *

Անտարակույս, հայ ժողովրդի և նրա հոգևոր հաստատություն Չայ Առաքելական Եկեղեցու պատմության ընթացքում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին քառորդները հիրավի ամենից ողբերգական ու ճակատագրական փուլերից են: Պարսկական, արաբական, բյուզանդական, թուրք-սելջուկյան և մոնղոլ-թաթարական արշավներն անհամեմատ սովորվեցին Առաջավոր Ասիայում համաշխարհային քաղաքակրթության առաջամարտիկ հայ ազգի նկատմամբ թուրք կոչվող ցեղի իրականացրած եղեռնագործությամբ: Համաշխարհային պատմության մեջ նախադեպը չունեցած ցեղասպանության (առնվազն 1890-ական թվականներից սկսած) զոհ դարձավ ողջ Մերձավոր և Միջին Արևելքում քրիստոնեության պատվար և լուսատու հանդիսացող ավելի քան երկու միլիոն հայություն:

Իր ժողովրդի, հավատավոր հոտի հետ համահավասար և անբաժան մեծագույն ողբերգություն ապրեց Չայ Եկեղեցին՝ սկսած ծխական քահանայից մինչև Մայր Աթոռն ու նրա Վեհափառ Հայրապետը: Միաժամանակ, ողբերգականից զատ հայ հոգևորականությունն եղավ նաև նշյալ ժամանակաշրջանում մղված հայոց ազգային-ազատագրական պայքարի մասնակից-մաքառողն ու դրա նվիրական աջակից-առաջնորդողը, օրինակ ծառայողը¹:

Մեծ եղեռնի արդյունքում հայության Գողգոթան ամբողջությամբ ապրեց և Չայ Եկեղեցին՝ ավերվեցին, այրվեցին ավելի քան 2000 վանքեր ու եկեղեցիներ, ոչնչացվեցին բազմա-հազար ձեռագրեր, զոհ գնացին շուրջ 4000 հոգևորականներ: Զանգի ակնհայտ էր այն փաստը, որ քանի դեռ եղեռնագործ թուրքը Չայ Եկեղեցուն չէր հարվածել՝ նրա հոտ ժողովրդին չէր կարող ոչնչացնել: Այս առթիվ միանգամայն տեղին ենք համարում ամփոփելով մեջբերել Հակոբ Սիրունու դիպուկ և ճշմարտացի կարծիքը. «Մարտիրոսացավ նաև Չայ Եկեղեցին: Դահիճը չիսնայեց և անոր: Ու շատ տրամաբանական էր: Պիտի չկրնար հայությունը խորտակել իսպառ, քանի կանգուն էր Չայ Եկեղեցին: Հոտը քնաջնջած ատեն, չիսնայեց նաև հովիվին: Եվ արդարև, Չայ Եկեղեցին իր բովանդակ հոգևորականությունը զոհ տվավ հայաջինջ սարսափներուն: Գավառական թեմերու առաջնորդներեն, առաջնորդական փոխանորդներեն և վանահայրերեն սկսյալ մինչև գյուղերու համեստ քահանաները երիտասարդ թուրքերու վայրագության զոհ գնացին, սպանվելով երբեմն այնպիսի չարչարաններու և խոշտանգումներու տակ, որոնց քով կնսեմանային հին սուրբերու կրած չարչարանները»²:

Սակայն, հայ ժողովուրդը՝ հավատարիմ իր համամարդկային առաքելությանն ու որդեգրած քրիստոնեական հավատքին, չոչնչացավ, այլ փյունիկին հարանման կրկին վերհաննեց ավերակների մոխրակույտից, շարունակեց ապրել, մաքառել ու հարատևել, ավելին՝ իր նահատակությունը դարձրեց վերածնություն. անասելի Գողգոթայից նորից հարություն առավ և իր հավերժի ճանապարհը շարունակեց հայը:

* * *

Փաստորեն, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ առնվազն վերջին հիսնամյակում հրատարակվել են ինչպես մեկ, այնպես էլ՝ բազմալեզու տասնյակ մատենագիտություններ, որոնք իրեն արժանիքներով հանդերձ՝ մեկ ամբողջական ձևով այդպես էլ չեն ներկայացրել թեման: Այս առումով, թեմայի մասին գրականության ամփոփ և համապարփակ մատենագիտության կազմումը հրատապ անհրաժեշտություն է, հատկապես՝ Հայոց ցեղասպանութան 100-ամյակի շեմին:

Նկատի ունենալով այն ակնհայտ փաստը, որ, ըստ էության, Հայոց ցեղասպանությունը և Հայկական հարցը ժամանակի ընթացքում զուգակցվել են, ներկայացվել է երկու թեմաներին

¹ Տես մանրամասն Ս. Էջմիածինը և Հայոց ցեղասպանությունը: Առաջաբան և հրատարակության պատրաստում՝ Ա. Ա. Հարությունյան: Մատենաշար «Արարատ»-ի ժառանգություն, Ը.: Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2010, 735 էջ:

² «Էջմիածին», 1965, թ. Ա., էջ 25-26:

առնչվող գրականությունը:

Ժամանակագրական առումով մատենագիտությունն սկսվում է 1860թ. Արևմտահայերի ազգային սահմանադրության ընդունումով, որով սկզբնավորվեց հայության քաղաքական և զինյալ պայքարը, ներառյալ Արցախյան շարժումը և ազատամարտը՝ որպես Հայկական հարցի բաղկացուցիչ մաս, և Սումգայիթի-Բաբելի ջարդերը՝ որպես Հայոց ցեղասպանության շարունակություն:

Ի տարբերություն նախորդ մատենագիտությունների՝ ներկա աշխատանքում նույն հեղինակի նույն գրքի տարբեր հրատարակություններն իրենց հատորներով ներկայացված են ընդամենը մեկ թվահամարի տակ:

Մատենագիտության կազմման սկզբունքն այբբենականն է: Այն ամփոփում է գրքերը հետևյալ լեզուներով՝ 1. հայերեն - 5869, 2. ռուսերեն - 2336, 3. անգլերեն - 3787, 4. ֆրանսերեն - 1551, 5. գերմաներեն - 1088, 6. թուրքերեն - 2335, ինչպես նաև՝ բուլղարերեն - 35, դանիերեն - 20, իսպաներեն - 56, իտալերեն - 168, լեհերեն - 8, հոլանդերեն - 8, հունգարերեն - 8, նորվեգերեն - 4, շվեդերեն - 18, չեխերեն - 11, պորտուգալերեն - 8, ռումիներեն - 8, սերբերեն - 7 լեզուներով: Ընդհանուր առմամբ 19 լեզվով ներկա մատենագիտության մեջ ամփոփված են թեմային վերաբերող 17.325 միավոր գիրք:

